Արձանագրություն 3/ճշտված/

Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/31» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «12» մարտի 2019թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Սամվել Մկրտչյան

Անդամներ

Միշա Ազարյան

Տաթև Մաշինյան

Գայանե Ջանազյան

Վազգեն Մխիթարյան

Գնումները համակարգող

Լուսինե Բաղրամյան

Օրակարգ

1. **Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին**

1.1 «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ -19/31» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝«ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ-ին, ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն և մասնակիցը հրավերով սահմանված կարգով ներկայացրել է որակավորման չափանիշները: «ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշներում հայտնաբերվել են հրավերին անհամապատասխանություններ՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում կցված չեն ներկայացված տեխնիկական միջոցների մի քանի տեխնիկական անձնագրերը, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշում կցված չեն վարորդների, մեխանիզատոր-տրակտորիստների վարորդական իրավունքները, և ինժեներների անձնագրերի երկրորդ կողմերը, «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում կցված չեն որոշ արձանագրություններ և ակտեր: Գնահատող հանձնաժողովը «ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ-ին առաջարկեց «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ -19/31» ծածկագրով գնանշման հարցման հրավերի առաջին մասի 7.20-րդ կետի 2-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման VII մասի 47-րդ կետի համաձայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները :

1.2 «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ -19/31» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել 13.03.2019թ ժամը 16:30, հասցեն՝ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 22 հասցեում, 311 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մկրտչյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ. Ազարյան

_____ Տ. Մաշինյան

_____ Գ. Ջանազյան

_____ Վ. Մխիթարյան

Գնումները համակարգող ՝ _____ Լ. Բաղրամյան